

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

ԿԱՐԾԻՔ

**Լուսինե Գազիկի Նազարյանի «Դեղագործական հոգածության
բարելավման հնարավոր ուղիների մշակումը փորլուծության ախտանիշի
դեպքում» թեմայով ատենախոսության վերաբերյալ՝ ներկայացված ԺԵ.00.01
«Դեղագիտություն» մասնագիտությամբ դեղագործական գիտությունների
թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար**

Լուսինե Նազարյանի ատենախոսական աշխատանքը նվիրված է փորլուծության ախտանիշի դեպքում դեղագործական հոգածության բարելավման հնարավոր ուղիների մշակմանը, որն ատենախոսն իրականացրել է Հայաստանում իրավիճակի ուսումնասիրության, դեղային քաղաքականության առաջնահերթ խնդիրների բացահայտման, մասնագետների և սպառողների տեղեկացվածության բարձրացմանն ուղղված գործիքակազմի մշակման, դրանց գործնական ներդրման և արդյունավետության գնահատման ճանապարհով՝ համակողմանի վերլուծությունների արդյունքում:

1981 թվականին ընդունված «Առողջություն բոլորի համար» գլոբալ ռազմավարությամբ Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը (ԱՀԿ) ճանապարհի հարթեց ինքնաբուժման հայեցակարգի զարգացման համար՝ առաջնային դիտարկելով անհատի դերն ու պատասխանատվությունը իր առողջության մասին հոգալու գործում: Միաժամանակ, ԱՀԿ-ն բազմիցս անդրադարձել է ինքնաբուժման նպատակով դեղերի կիրառման վտանգներին, ներառյալ՝ սխալ ինքնախտորոշումը, սխալ դեղի ընտրությունը, դեղի ոչ ճիշտ կիրառումը, դեղային թունավորումները, լուրջ հիվանդությունների քողարկումը և այլն: Բազմաթիվ ուսումնասիրությունների արդյունքում ապացուցված է, որ որպես ամենահասանելի առողջապահության ոլորտի մասնագետ դեղատան աշխատակցի պատշաճ խորհրդատվությունը կարող է նպաստել դեղերի ռացիոնալ և անվտանգ օգտագործմանը և կառավարել ինքնաբուժումը՝ միաժամանակ նվազեցնելով առողջապահական համակարգի

ծանրաբեռնվածությունը և բարձրացնելով համակարգի ծախսարդյունավետությունը: Հարկ է նշել նաև, որ ինքնաբուժումը Հայաստանում ունի իր առանձնահատկությունները, որն առաջին հերթին պայմանավորված է ոչ միայն առանց դեղատոմսի բացթողնվող, այլև նաև դեղատոմսային դեղերի ազատ ձեռք բերման հնարավորությամբ, այն դեպքում, երբ հստակեցված չեն դեղագետի և դեղագործի գործառույթները հանրային դեղատանը, բացի այդ հաստատված չեն դեռևս 2016 թվականին ընդունված «Դեղերի մասին» ՀՀ օրենքով նախատեսվող դեղատնային գործունեության պահանջները: Արդյունքում, ցածր է նաև դեղատան նկատմամբ վստահության մակարդակը, ավելին, կա արմատավորված կարծիք, որ առանց դեղատոմսի դեղեր բացթողնելիս բավարար է միայն դեղագործի խորհրդատվությունը: Հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ ինքնաբուժման նպատակով դեղատան այցելուների մոտ զգալի թիվ են կազմում փորլուծության դեպքերը, որոնց ինքնաբուժման ժամանակ մեծ է հակամանրէային դեղերի չարաշահման և դրանց նկատմամբ զգայունության տարածման ռիսկը, ավելի ակնհայտ է դառնում կատարված աշխատանքի արդիականությունը և կարևորությունը մեր հանրապետության համար:

Ատենախոսական աշխատանքը գրված է հայերեն լեզվով, շարադրված է համակարգչային 150 տպագիր էջում և կազմված է ներածությունից, գրականության վերլուծությունից, առանձին գլուխներում ներկայացված են հետազոտության նյութը և մեթոդները, հետազոտության արդյունքները և դրանց քննարկումը, որոնք ամփոփված են եզրակացություններով և առաջարկություններով: Գրականության ակնարկում լիովին արտացոլված են խնդրին առնչվող ժամանակակից գրականության տվյալները՝ ներառելով այլ երկրների փորձը, ինքնաբուժման կառավարման գործընթացի բաղադրիչները, հիմնական ուղղություններն ու սկզբունքները: Ատենախոսության սեղմագիրը և հրատարակված հոդվածները լիովին արտացոլում են աշխատանքի բովանդակությունը:

Հետազոտության արդյունքների հավաստիությունը հիմնավորված է զգալի քանակությամբ փաստացի նյութերով, առաջադրված խնդիրների լուծման համար

մեթոդների ճիշտ ընտրությամբ. կիրառված իրավիճակային, բովանդակային և վիճակագրական վերլուծության, սոցիոլոգիական ուսումնասիրության, հարցումների և հարցազրույցների միջոցով իրականացված քանակական և որակական հետազոտությունների մեթոդները, ինչպես նաև համակարգային մոտեցումը հնարավորություն են տվել համակողմանիորեն ուսումնասիրել խնդիրը ՀՀ-ում: Եզրակացությունները և առաջարկությունները տրամաբանորեն հիմնավորված են և ընդգրկում են հետազոտության հիմնական ուղղությունները:

Հետազոտությունների արդյունքների հիման վրա հեղինակի կողմից ցույց է տրվել, որ դեղսպառողների վստահությունը դեղատան աշխատակիցների նկատմամբ բավականին ցածր է՝ 73%, իսկ փորլուծության ախտանիշի դեպքում պացիենտների կեսից ավելին (55,4%) դեղերը ձեռք են բերում առանց մասնագիտական խորհրդատվության: Ընդ որում, առաջին անգամ արձանագրվել է, որ դեղատանը աշխատում են նաև ուսանողներ, ինչը գործող օրենսդրությամբ արգելված է: Հատկանշական է նաև, որ դեղատան աշխատակիցների կողմից փորլուծության ախտանիշի և բուժման միջոցների վերաբերյալ գիտելիքները համապարփակ չեն, տրամադրվող խորհրդատվությունը հիմնված չէ ուղեցույցների վրա, հաճախ լինում է ոչ պատշաճ, որն ավելի նկատելի է հատկապես ոչ բարձրագույն կրթությամբ աշխատակիցների և ուսանողների շրջանում:

Ուսումնասիրությունների արդյունքում ատենախոսի կողմից ապացուցվել է փորլուծության ժամանակ կիրառվող առանց դեղատոմսի բաց թողնվող դեղերի խորհրդատվության ժամանակ անհրաժեշտ տեղեկատվության ստանդարտացման, ինչպես նաև դեղագործական հոգածության տեղեկատվական թերթիկի և ալգորիթմի կիրառման անհրաժեշտությունն ու արդյունավետությունը, միաժամանակ հաստատելով սպառողի դեղակրթական մակարդակի բարձրացմանն ուղղված միջոցառումների նախաձեռնման կարևորությունը: Հիմնավորվել է նաև դեղատան աշխատակիցներին ներկայացվող պահանջներին առնչվող օրենսդրական կարգավորումների և դեղագործական հոգածության հիման վրա մշակված դեղատնային գործունեության պահանջների ներդրման նպատակահարմարությունը ՀՀ-ում:

Կատարված հետազոտության արդյունքները թույլ են տալիս փորլուծության ախտանիշի կառավարման համար նախատեսված դեղագործական հոգածության տեղեկատվական թերթիկը և ալգորիթմը կիրառել ինչպես կրթական այնպես էլ շարունակական զարգացման ծրագրերում՝ որպես փորլուծության ախտանիշի անվտանգ և արդյունավետ ինքնաբուժման, ինչպես նաև դրա նկատմամբ դեղատան վերահսկողության երաշխավորման միջոց:

Այսպիսով, հեղինակի կողմից առաջին անգամ կատարվել է Հայաստանում փորլուծության ախտանիշի դեպքում ինքնաբուժման բազմակողմանի ուսումնասիրություն և ստացված արդյունքների հիման վրա մշակվել են դեղագործական հոգածության բարելավման միջոցառումներ, որոնք ունեն ինչպես գիտական, այնպես էլ գործնական նշանակություն:

Ատենախոսության արդյունքները հրատարակվել են բավարար թվով գիտական աշխատանքներում, այդ թվում՝ ազդեցության գործակից ունեցող միջազգային ամսագրերում:

Ատենախոսության վերաբերյալ սկզբունքային դիտողություններ չկան, սակայն նպատակահարմար եմ համարում անդրադարձը հետևյալ դիտարկումներին.

1. Բացահայտելով և քննարկելով տարբեր բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից դեղագետի որակավորում ստացած մասնագետների, ինչպես նաև դեղագործների և ուսանողների կողմից տրամադրվող դեղագործական հոգածության առանցքային տարբերությունները, ընդ որում, ոչ միայն Երևանում, այլ նաև մարզերում, նախընտրելի կլինեք դրանց հիմնապատճառների, այդ թվում ուսումնական ծրագրերի և իրավական դաշտի ավելի խորքային ուսումնասիրությունը և թիրախային առաջարկների ներկայացումը՝ ապահովելով հետագա իրավական կարգավորումների գիտահետազոտությունը:
2. Դեղատան աշխատակիցների համար նախատեսված հարցաթերթիկում որպես տեղեկատվության աղբյուր դեղի գրանցման ժամանակ հաստատվող և գրանցված դեղերի մասին տեղեկություններ ընդգրկող

գրանցամատյանի մաս կազմող դեղի ընդհանուր բնութագրի ներառումը, իսկ դեղսպառողների հարցաթերթիկում նաև դեղերի գրանցամատյանի մասին նշումը հնարավորություն կտար բացահայտելու օրենսդրորեն ամրագրված միակ պաշտոնական տեղեկատվության աղբյուրի կիրառման աստիճանը՝ իրազեկման բարձրացման հետագա գործիքակազմի մշակման նպատակով:

3. Գործնական առաջարկությունների մեջ օգտակար կլինեն նաև հանրային դեղատան դեղագետների շարունակական մասնագիտական զարգացման ծրագրերի տարանջատումը և դրանց պարտադիր ցանկում դեղագործական հոգածության վերաբերյալ տեղեկատվական թերթիկների և ալգորիթմների ներառումը:
4. Անհրաժեշտ է նաև բացառել ուսումնական նպատակով դեղագործական հոգածության տեղեկատվական թերթիկներում դեղերի առևտրային անվանումների և արտադրողների տվյալների ներառումը՝ ապահովելու տեղեկատվության անկողմնակալությունը ու չնպաստելու առանձին դեղերի առաջնությունը շուկայում:
5. Հաշվի առնելով, փորլուծության ախտանիշի դեպքում կիրառվող դեղերի վերաբերյալ զանգվածային լրատվամիջոցներով տարածվող, ինչպես նաև մասնագետներին տրամադրվող գովազդային նյութերի ազդեցությունը դեղերի ընտրության վրա, դրանց ուսումնասիրության արդյունքները հնարավորություն կտային գնահատել համապատասխանությունը օրենսդրության պահանջներին:

Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ վերոնշյալ դիտարկումները ամենևին չեն նվազեցնում Լուսինե Նազարյանի կողմից ներկայացված ատենախոսական աշխատանքի գիտական արժեքը, իսկ գործնական նշանակությունն առավել քան ակնհայտ է:

Այսպիսով, ԺԵ.00.01 «Դեղագիտություն» մասնագիտությամբ դեղագործական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար Լուսինե Գագիկի Նազարյանի կողմից ներկայացված «Դեղագործական հոգածության բարելավման հնարավոր ուղիների մշակումը փորլուծության ախտանիշի

դեպքում» թեմայով ատենախոսության արդիականությունը, աշխատանքների ծավալը, ստացված արդյունքները, գիտական նորույթը և կիրառական նշանակությունը թույլ են տալիս եզրահանգել, որ այն բավարարում է թեկնածուական ատենախոսություններին ՀՀ ԲՈԿ-ի կողմից ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակը արժանի է դեղագործական գիտությունների թեկնածուի հայցվող գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս՝

ՀՀ ԱՆ Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների

փորձագիտական կենտրոնի

տնօրենի տեղակալ, դ.գ.թ.



Լ.Ֆ.Ղազարյան

Լ.Ֆ.Ղազարյանի ստորագրությունը հաստատում եմ,

ՀՀ ԱՆ Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների

փորձագիտական կենտրոնի

տնօրեն, բ.գ.թ.



Ա.Մ.Բադրյան

12.06.2025թ.

